

# Երեւան



(198-199)  
Մարտ-ապրիլ, 2023



## ՉԱՌԱՄՅԱԼ ԾԵՐՈՒՆԻՆ՝ ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԳ

Համարի հովանավոր ՀԱՄԱԶԳԱՅԻՆ հայ կրթական եւ մշակութային հիմնադրամի Գյուճրու գրասենյակ

աշխատանքի շնորհիվ մոտ մեկ դար շարունակ աշխարհասփյուռ հայությունը, իր ինքնատիպ դիմագիծը պահպանելով, վստահորեն քայլեց ժամանակի մեջ:

Միտելիներս, եկեք միասնաբար ու ավելի ամուր բռնեք միության ձեռքը, քայլեք դեպի արևը՝ ի նպաստ հայի եւ Հայրենիքի:

Գիտե՛մ՝ մեզ հեշտ օրեր չեն սպասում, բայց, քանի որ արվեստը երկնքի պարզևն է անհատներին, նույնն է, թե՛ դեպի Արարիչը տանող ճանապարհը միշտ տատակոտ եւ քարքարոտ լինելու պարագայում դժվարանցանելի է դառնում, բայց անցնողն է հասնում...

Վստահ եմ՝ միասին պիտի կերտենք մեր վաղը ու հպարտորեն փոխանցենք մեր ունեցածներով քայլողներին, նրանք էլ իրենց հերթին պիտի փոխանցեն իրենց հաջորդներին:

Ուրախանում եմք նորածին զավակի բարի լուրով:

Աստված օգնական մեզ մեր բոլոր գործերում:

Շնորհավոր օրհնյալ ու արդարացված եւ սպասված ծնունդը, մեր բոլորի կողմից սիրված ՀԱՄԱԶԳԱՅԻՆ հայ կրթական եւ մշակութային միություն:

Արա ՆԱԽՇՔԱՐՅԱՆ  
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ հայ կրթական եւ մշակութային հիմնադրամի Գյուճրու գրասենյակի պատասխանատու

### ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ հայ կրթական եւ մշակութային միություն.

Հիմնվել է 1928 թվականի մայիսի 28-ին, Կահիրեում՝ սկզբում «Հայ կրթական եւ հրատարակչական ընկերություն» անունով: Հիմնադիրներ՝ Համո Օհանջանյան, Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալյան, Գասպար Իփեկյան, Ստեփան Եսայան, Մինաս Խաչատրյան, Սարգիս Մալխասյան, Սեդրակ Պալըզյան, Հակոբ Պալըզյան:

Նպատակն էր՝ «Հայ ժողովրդի կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզվով և հայեցի ոգով». ըստ 1990 թվականին ընդունված կանոնագրի՝ Համազգային հայ կրթական եւ մշակութային միություն (ՀՀԿՄՄ), համահայկական կազմակերպություն:

### ՆՊԱՏԱԿԸ.

- սատարել հայ մշակույթի, հայ դպրության, հայ լեզվի եւ ընդհանրապես հայ հոգեկան և իմացական արժեքների ճանաչման, զարգացման, տարածման եւ ժողովրդականացման Հայաստանի եւ արտերկրի մեջ,

- օժանդակել հայապահպանման գործին, ազգային նշանակություն ունեցող ավանդույթների շարունակման և մշակութային նոր ավանդների ստեղծման ճանապարհին,

- մշակութային ձեռնարկներով՝ ցուցահանդես, հանդիսություն, հրատարակություններ, հային, հայությանն ու Հայ Դատը ծանոթացնել հայ թե օտար հասարակությանը:

### ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Համազգային Մշակութային Միության գերագույն մարմինն է Կենտրոնական վարչությունը՝ կազմված 11 անդամից. ընտրվում է պատգամավորական ժողովում 4 տարի ժամկետով:

Կենտրոնական վարչությանը կից ստեղծված են կրթական, տնտեսական, հրատարակչական, դասագրքերի, շինարարական, ռադիոհեռուստիայի համընդհանուր:

Գործում են շրջանային վարչությունները, որոնք կազմվում են աշխարհագրական սկզբունքով. Լիբանանի, Սիրիայի, Հունաստանի, Կիպրոսի, Ամերիկայի Միացյալ Նահանգների (Արեւելյան եւ Արեւմտյան), Կանադայի, Ավստրալիայի, Ֆրանսիայի, Հայաստանի, շուրջ 50 մասնաճյուղ: Համազգային Մշակութային Միության միջոցները գոյանում են նվիրատվություններից եւ հան-

գանակություններից, ունեցած կալվածքների ու հաստատությունների հասույթներից:

### ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակներն իրագործելու համար Համազգային Մշակութային Միությունն առաջին հերթին 1930 թվականին Բեյրութում բացել է Հայ ճեմարանը (1948 թվականից՝ Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարան), 1931 թվականին «Հույս» տպարանը (1967 թվականից՝ Համազգայինի Վահե Սեթեան տպարան): 1980 թվականին հիմնադրվել է Մարսելի կրթական կենտրոնը (մանկապարտեզով, նախակրթարանով, միջնակարգով եւ երկրորդականով), 1986 թվականին Սիդնեյում (Ավստրալիա)՝ Համազգայինի Արշակ եւ Սոֆի Գոլլեստըն (Գալստյան) երկրորդական վարժարանը: Այս ամենօրյա վարժարաններից բացի Համազգային Մշակութային Միության մասնաճյուղերը պահում են նաեւ մեկօրյա դպրոցներ:

### ԹԱՏՐՈՆ

Հայ թատերական արվեստը վերակենդանացնելու, տարածելու եւ նրա դերը հայ զաղութներում բարձրացնելու նպատակով 1941 թվականին Գասպար Իփեկյանի ջանքերով կազմվել է Համազգայինի թատերասերների միությունը:

Մինչեւ 1951 թվականը թատերախումբը գործել է Բեյրութում, այնուհետեւ հյուրախաղերի է մեկնել Եվրոպա, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկա: Գասպար Իփեկյանի մահից հետո, ի պատիվ նրա, 1952 թվականին խումբը կոչվել է «Գասպար Իփեկյան թատերախումբ», ղեկավարությունը ստանձնել է ժողովարար Իսահանը:

### ԵՐԳՐԱՎԵՍ

Մեծ է երգահան Բարսեղ Կանաչեանի ղեկավարությամբ 1956 թվականին ստեղծված «Գուսան»

երգչախմբի ներդրումը սփյուռքահայի երաժշտական ճաշակը ձեւավորելու գործում: 1960 թվականին կազմվել է «Քնար» ազգագրական երգի-պարի խումբը (ղեկավար Վարդգես Աբրահամյան), 1978 թվականին «Շնճղա» (ղեկավար Վաչե Պարսամյան) և 1980 թվականին «Նանոր» (խմբավար Ալեքս Մնակեան) մանկական երգչախմբերը, որոնք մրցանակներ են շահել միջազգային մրցույթներում:

### ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայագիտությունը զարգացնելու, հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության ու սուղիչներ, նաև խմբագիրներ եւ հանրային այլ գործիչներ պատրաստելու համար 1974 թվականին հիմնվել է Հայագիտական բարձրագույն հիմնարկը:

### ՄՇԱԿՈՒՅԹ

Համազգային Մշակութային Միության մեծ իրագործումներից է «Լեւոն Շանթ» մշակութային կենտրոնը Բեյրութում, որն իր հարկի տակ պարփակում է Թորոս Ռուսին կերպարվեստի ակադեմիան, Բարսեղ Կանաչեան երաժշտանոցը, ինչպես նաեւ երգի եւ բալետի դպրոցներ:

Համազգայինը շարունակում է իր արդարացված ընթացքը եւ անխափան գործում է նաեւ Արցախում: Վստահ եմ, որ Համազգային Միությունը անխոցելի ցվիրյալների օգնությամբ իր հաղթական քայլարշավը կանցնի Գյուճրու գրասենյակի օգնությամբ՝ Շիրակի մարզի բոլոր գյուղական ու քաղաքային համայնքների փողոցներով ու նոր սերունդի մեջ կղնի ազգային սերմնահատիկը՝ հայի վաղվա օրերին գաղափարական նոր ծիլեր տալու:

## ԲԱՐՁՐ ՆՇԱՆ

Ես հո տակի տիլին ենք հասել: Ես հո ամենալավն եմ: Սրանից դեռ էլ չիք: Չկա, չի եղել: Հո ավելի գիտուն ենք, թե որ խելքի գոռին չտանք: Իմաստուն տողիդ մեռնեմ. մաղթանքի ձև չէ, անգիջում տրվել է: Սրանից դեռ մնում է մատը դնել ապագա տանողի վրա ու թավալվել տատրակ վերևում: Թե՛ պիտի սկսվի ու շարունակվի մի բան՝ ամենաբարձրում մեր թանկագին

զվխապտույտը: Էլ ի՞նչ երկու տիրոջ արհեստային ծառայել՝ մամոնային կամ էն մյուսին, ով պիտի իջնի հոգուն սրսփանք: Ի՞նչ անձկություն է. արժեզրկման խարանը հոգիներիս մեջ, հիլը ճակատներիս էլ հասած: Բախտի հետ պտտվող անիվը էլի կա: Ձուգեցինք ու պտտեցինք, զուգեցինք ու լրացրինք, հիլը ինչքան էլ քիչ ենք, հիլը ինչքան էլ ջուտ ու քիչ ենք: Էլ ե՞րբ, սիրելյան օրերս, կանաչենք, ծաղկենք ու կանաչենք ոսկեանգուսպ

ճիչով: Անհեղուկ ջրի հեքիաթով ինչքան ապրենք. գավազանով գուրգուրեցինք քարը. սիրտը փխրում ընկա՞վ, բխումը եղա՞վ քնքուշ, հախումն, թախծահատ: Սա որ հույսի պես է, ինչո՞ւ է ինքը անհույս: Սա որ չի ամաչեցնում, ինչո՞ւ է ինքը ամաչում: Սա որ ջոջ կռիվ է, ինչո՞ւ ջոջ սերն էլ հետը չէ: Չասունը չասի, ասո՞ւնն էլ չասի: Ձուրը կրակին թողինք, թե

կրակը քաշեցինք ջրի տակը, մի հաշիվ է. հույսը ծաղիկ տվե՞ց: Ո՞ր էր թե՛ հող ու ծիլ բարև տային իրար: Ողջոյն բարևին, ակը բացողին, ջուրն օրհնողին ողջոյն: Ծառաբարդարին չուխա հագնողին, կարմիր սուլավորին ողջոյն: Էլի շարժ չքնաղ որոնելին սիրուն Սերը: Ես որ ունենք, ինչո՞ւ էլի չուենք ու ավելի հաճախ ենք վզներս ծռում իբր ունենալու և նորեն կարծելու, թե ունենք: Ունենալ-չունենալը մեզ վրա պառաված խնդիր է:

-Գեղեցկությունը կորցրածի թռչակով չես ապրի, - տխրում է տառս: -Քաղաքում ամայի կանայք շատացել են,- լրջանում է հայրս: -Մի խուժան ճղեց արանքը, մեզնից մեզ տարածք թողեց: Ինչո՞ւ խուժանապուրծ չեղանք, թե՛ նրա լավին հանդիպեցինք: Չէ՛, հաստատ, զուլալ ջուրը խմել ենք և տակի տիլին ենք հասել: Սրանից դեռ էլ չիք: Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ









### ՄՈՆԵ ԱՆՏՈՆՅԱՆ

#### ՎԻՃԱԿՆԵՐ

\*\*\*  
 Վրայովս եմ հանում էլաստիկ թախիծը քրտնել կպել է մարմնիցս պոկում եմ չէ, հաստատ չի բուրում անհոտ է, թափանցիկ թաց է, որ քամեմ չի քամվի այստեղ լուսավոր սահուն է պտտվում հույսը այստեղ քամի չկա և սրտիս ծայրին ամեն օր միշտ մի նոր թռչուն ակապելլա է երգում

ինձ սիրում են. սիրտս լցվում ու լցվում է ինձ սիրում են:

\*\*\*  
 Կապտաթաց կապտաթաց երկինք է ուրիշ կապույտ է ուրիշ ամպեր են գուսպ գտված և ծիծեռնաձայն է երգչախումբը ուղիղ 6 անց 15: Սոլո այսօր չկա, որովհետև արևն է սպիտակ-դեղին

Վերադարձրու ակապելլա երգող իմ թռչնին թրջված տանիքներից պսպղուն գազոններից կանաչ կապույտ ծվեն կտցին...

\*\*\*  
 Թռչնակները աչքիս ուշուտ դիպան այսօր գուցե ամպն էր գունատ գուցե գազոններում աստղ էր ընկած՝ ցածր տոնայնությամբ ցածր տոնայնությամբ

Ինձ էլ մի հարցրու՝ ինչո՞ւ է ձայնդ թաց էլաստիկ ու թախտու Դու դեպի ելք շնչիր ծաղկած ծառը շնչիր ճերմակը թունդ շնչիր խորքից:

\*\*\*  
 Ել, գնա դաշտերից կանաչ գազոններից կապույտ եթերներից մաքուր քլորոֆիլ բեր սիրուն ֆոտոսինթեզ արա

և կլանիր լույսը՝ երկար կարմիր կապույտ մանուշակի գույնի նվաղող աչքերին հույսի շավիղ բացող, առավոտ լույս (և արեգակ արդար):

\*\*\*  
 Թափանցիկ է տրոփը ոտքերս զգում եմ որովհետև մրսում եմ ուսերս թափվում եմ որովհետև զգում եմ Ջզում եմ ելվերը միտքս՝ գլորվող ձեռքերս ոլորաններում

Ես զգվեմ այս ճոճքին ընթացիկ

Դու հենցվիր: -Բե՛ր լսեմ քո մեխանիկական սիրտը... Մեկ է՝ իսկական է ամեն ինչ զգում է, բժիշկ:

\*\*\*  
 Թափանցիկ շնչափեղծ թափանցիկ է թախիծը Արուս տատի ցավն օրորում է նրան նրա լացը Թթվածնով հագեցող լացը և հոսում են դեմքը, խորշոմները նրա

Ի՞նչն է քեզ անհանգստացնում, տատ...

Ես չդիմացա Արուս տատի թախտին միակ որդու միևնուճարն էր դեռ անհայտ անուն այս 44-օրյա պատերազմում... Դոգին էր պատրաստ տալու իսկ նրան ասում էին՝ տատ, դու շնչիր շնչիր այս ծանր թավիշը այս լլկող գարունը շնչիր

\*\*\*  
 Շատ կարևոր քո գրչի տակ ինչ խլիրտներ ասես թող թովռան քո սրտի տակ, ինչ ալիքներ ասես թող ծփծփան (խրատող է այս տեսակը) ինքը օդը քլորաջուր կանի, իսկ դու խորը շնչիր՝ շունչդ պահիր... Շնչիր այս թաց երեկոն՝ ուղիղ 21. 21 թաց գազոնը շնչիր թաց քլորոֆիլը շնչիր շնչիր:

Այստեղ երկինքը դիպած է ամենաբարձր պատուհաններից, իսկ աստղերը վառվող լույսերն են այնտեղ:

\*\*\*  
 Կայծկլտաց էլաստիկ օրը վերջացավ նախավերջին կայծը պատին ափս տարավ այս անգամ վեր չթռա այս անգամ բոցեր չունեցանք

Ծաղկեցի պատուհանից ճերմակը շնչացող ծառերի հետ ճերմակ ծաղկեցի

\*\*\*  
 Բարի լույս նազլու աղջիկ, Գյումրիում գարունը քանդել է կոճակները և սպասում է իրենով հիացողներին Բարի լույս, իսկ այստեղ պատուհանից բարակիրան մի ծառ՝ ծաղկած խնդմնդում է կանաչ գազոնում ինքը միակն է

միակը (քեզ համար ելած մարտի) Նազլուի հոմանիշը, որպես հատուկ անուն՝ ես եմ ըստ Ռոզա Դովհաննիսյանի ծաղկող:

\*\*\*  
 Էլաստիկ գուլալ է շշերում գուլալ է ու չի զնգում եթերից է, մի ծվեն չի էլ զնգզնգացնում: Ձուլալը արագ գուլանում է երբ վառվում ես գուլ-գուլ խմվում է երբ վառվում ես

Ժպիտող գոլ տուր այս պատուհանին եկած թռչնին քեզ համար միշտ նոր օկտավայից երգող

\*\*\*  
 Երբ թափանցիկ է հրաշալին և հորիզոնը թաց քներով գրկվող եթե անգամ գրկումդ երկինքը չէ բաց եթե անգամ երկնաքերերին հպված երկինքն է երգիդ

Երևանում շոգ կարճաթև է գարունը

ինձ հուշում են- սկսել նոր էջից գարունը:

\*\*\*  
 Թե գիտես անունը բարձրաձայն մի՛ ասա քեզ կուզի քանդել՝ չքանդվես էլաստիկ վիրակապ դիր վրան փոքրացնել կփորձի ափի չափ ափիդ մոտ չթողնես չթողնես

Դու շնչիր այս առավոտը այս ծաղկած ծառը բարակիրան շնչա այս կանաչ գազոնը

Դու շնչիր՝ շա՛տ խորը շա՛տ դանդաղ:

\*\*\*  
 Դիմա Գյումրիում անձրև է

կամ էլ հենց նոր դադարեց Մի պոետ միայնակ սրճարանում խմում է կապուչինո ինձ հետ իբր ինձ համար ու նայում է դուրս ուղիղ Քըրք Քըրքոյանին Արուսյան փողոցում է սրճարանը «Իմ մասին»-ը մերոնց ստիխների թեման է, որ թարգմանել է Մայա Շերեմետևան պոետը Ռոզին է, օ՛վ Վարդը (ասաց՝ մի ուրիշ ցող կիջնի վրաս...)

Մնացածը թաց մայթերն են ինքնամեկուսացումը թացն ու ավելի թանձրը գարնան

\*\*\*  
 Գիտես Գյումրիում ինչ եղանակ է, Սոնա, այստեղ ծիրանենիները ծաղկել են և օրը մեղուններն են երգում մեղուններն են երգում

Թովչանք է ծաղկաթրթիռ է ծիրանենին և մեղունները և գարունը և ոչ միայն...

Ես հախուռն զգացի քաղաքիս խլրտոցը մեղվածայն ծաղկող ծիրանենին և գարունը լսեցի Անդրանիկ Կարապետյանի ալեհավաք ձայնից

\*\*\*  
 Սո-նա՞ հարցականով համ զգույշ համ էլ կամաց. ինչը՞ իս ես, ցավդ տանեն (է՛հ, թող քամին տանի) ծայնն օտար է ծանոթ օտար և հարազատ էլ ո՛վ...

Թղթեր ունես գրիր թեթև թաց թափանցիկ թունդ բառերով գրիր

ճերմակ սրտուռ չունեն ոչինչ պատուհանին գրեմ կամ էլ օդին հպումներով կամ էլ բջջայինիս նոթաբաժնում կամ էլ ծիծեռնակի թևին կամ էլ

Այս առավոտը կիվի էր կեղևվող երբ մանրիկ աղվամազից սրթսրթացի

Իսկ Գագիկ Սարոյանը պարտվողներին չի էլ զանգում:

\*\*\*  
 Ամեն օր կարդում էի մաքուր թղթից ամեն օր՝ նոր տող թարմ թանաքի բույրով հատ-հատ, կրկին ու զուսպ ծայնս ելևէղող տողերը՝ ոչ (դե ես՝ նրբաբնույթ, տողերը բորբ) և Գրողը այքը պատուհանին զմայլվում էր՝ ինչպես ծայնիս միջով աստղեր են տաք ընկնում դեռ թաց դեռ թաց գրերին (Նա իր կյանքի վեպն էր լսում):

Մեզ մտածել էր սովորեցնում. պատանի էինք: Քեզ հետ կոնֆետներ տար ... ու մեկ էլ Չարենցի ոտքերի մոտ քիչ նստիր, սրա-նրա խելքին մի՛ ընկիր:

Այդ պահին Չարենցը կիսադեմով էր ժպտում թեև շրջված էր մեզ թիկունքով:

\*\*\*  
 Մի քիչ դժվար է լուսանում դեղատան նեոնային աչքերը երբ հանգչեն լույսն ավելի կմոտենա մեր սրտերին. մեկ երկու երեք հաչ Թռչնախոնով շառագույնով դու տար ներս այս խորալը դու շնչիր կանաչ առավոտը կապույտ ամպը

Թեթև տար:



Գործ՝ Դանբարձում Դուկասյանի



ԼՈՍՏԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՍ

ՔԱՍՏԻՑ ՔԱՇՎԱԾՆԵՐԸ /Շարք/

ՆԱ վերից ասաց, որ Սերը շուտով վերջանալու է, Ու քանի որ բարձրի ծայն ուշ է հասնում, Մարդիկ դեռ չէին լսել, Իսկ կենդանիները ծայն ու զգուշացումը հասցրել էին որսալ իրենց ուլտրազգայուն ամեն ինչով...

Մարդիկ չէին կարողանում գտնել մեկին, որ կսիրեր իրենց, Չէին գտնում մեկին, Որին իրենք կկարողանային սիրել, Ու ստիպված... իրենք իրենց սիրեցին: Կանցնեն տարիներ, Ու քանից քաշված այս մարդկանց ակամեջներին ուշացումով կհասնի վերևի ձայնը, Որով կսավի՞ զգուշ եղեք, Շուտով սերը վերջանալու է, Ու ձեզանից շատերը տրաքվելու են դրա կուտակումից ներսում: Ախր սերը սկսվում է ներսում, Որ դուրս գա Ու չավարտվի...

Քամի էր, ասացի՝ քաշվանք, Ես էլ շուկայից լիքը բառ ժողոված Տանում էի թղթերի մոտ, Ամենքին իր տեղը շարելու, Ու քանի որ դեռ վերնագիր չուներ, Անծածկ բառերս քամին քշեց, Եկա, գրեցի պատմվածքս, Որտեղ միայն հերոսներ կային, առանց բառերի, Իսկ ընթերցողներս ասում էին՝ -Այն կինը հոգոց հանեց, ու մենք նրան հասկացանք: -Տղամարդը հարբած օրորվում էր, Մենք գիտենք պատճառը՝ Իմ օրն է ընկել... -Աղջիկը շատ էր ծիծաղում, Չլինի՞՞ զսպել է լացը... Մեկն էլ ասաց. -Էլի՞ գրիր, էլի՞ գրիր մեծ պատմվածքներ, որտեղ բառեր չկան... Ու Ես հասկացա, որ ամենանրբանկատ խմբագիրը քամին է. նա չի հանդուրժում

թեթևությունները բառերի տեսքով...

Գրական մրցույթ էր, մեկն ասելու բան չուներ, Ուստի բառարանի ամենասիրուն բառերը շարեց կողք կողքի, Նրանց իրարից անջատեց և ուղարկեց, Ճամփի քամին պատռեց նրանց ծրարն ու Մարդիկ տեսան, թե որքան տգեղ են այն բառերը Որոնք բառարանից են վերցնում, Ոչ սրտից...

Չորեքշաբթի էր, էլի քամի ելավ, Ասի՛ սպասիր, սա ո՞ւմ վերնագիրն է քշում: Տեսնեմ ազգերինն է... Էլի դեռ-դեռ քշեց, Որոշ ազգերի ծեփեց ժայռերին, Որոշների ջուրը լցրեց, Չանգստացավ, ասի. -Յետո՞, դուրդ եկա՞՞վ. Չեզեց, թե -Կարևորը կանգուն մնացողների դուրը գալիս է...

Ինձ հետ հաճախ է պատահում, Որ ուզում եմ գրել, Բայց ձեռքիս տակ միայն վերնագիր կա. Այսօրվա վերնագիրը գրեցի թե՛ չէ, էլ բառերիս տերը չեղա. Քշեց քամին. Ասի՛ գոնե կետադրությունս թող, Թռցրեց, Ասաց՝ դու կանգուն ես մնում, հերիք է: Երբ քամին դադարեց, դատարկ թղթերն ուղարկեցի գրական մրցույթի, Չէ՞ որ էնտեղ մարդու անունը բավական է...

Գիտեմ, մի օր կմտնեմ

հայտարարությունների էջ Ու կկարդամ. «Շտապ, ԱՄՆ-ից, Գերմանիայից ստացել եմ կոսմետիկ բանաստեղծություններ, Իրենց արժեքից էժան կտամ, Մյունխեն էլ կառաջարկի Ֆրանսիայից ստացած ամենաբուրավետ քնարերգությունը, Դարձյալ՝ կես գին... Ես կնայեմ դրանք ու քնննեմք, քանզի ես ու իմ շատ ընկերներ ավելի որակովներն ենք առաջարկում, տեղական արտադրության... Մենք ամաչում ենք գովազդել, հայտարարություն տալ, Մի նուրբ հոգի տեսնեմք, շշմջում ենք՝ Տեղական ընտիր գրականություն կա, Կուզե՞՞ս լսել, ու վերջ... Մենք՝ գովազդի քամուց քաշվածներս: Չետո հայտարարությունների էջի համակարգողը կասի՝ Սա՛ է բարձր գիրը, Սա՛՛ կարդացեք... Ու քաղաքումը կշատանան աչքերի անճաշակ հայացքով կանայք, Տիա՞՞ թույլով տղամարդիկ, Որոնց բարեկեցի փռշտալու ենք Մենք՝ նրանք, ովքեր չկարողացան ժամանակին հայտարարությունների էջում գովել իրենց ապրանքը...

Հինգ ամիս չփվելուց հետո էլի քամի ելավ, Ու գույգի սերը քշեց... տղան աղջկան մերժեց, և աղջիկն ունեցավ օրվա մեջ դատարկ մնացած հինգ-վեց ժամ, որը չգիտեր, թե որտեղից էր վերցրել ու տրամադրել տղային: Նա մի շաբաթ տագնապեց,

որովհետև երբեք չէր ունեցել ժամեր, որ այդքան դատարկ լինեին ու միաժամանակ ծանր: Ու աղջիկը որոշեց իր վրա ծախսել այդ ժամանակը՝ օրինակ դուրս գալ տնից ու քայլել: Աղջկա գնացած ճանապարհն ասֆալտապատ էր, որը որոշ ժամանակ անց սկսեց ճաքեր տալ ու մանր, սիրուն ծաղիկներ դուրս բերել: Ծաղիկները գոհ ժպտում էին, ասֆալտի երեսը ճաքել էր ու «սիրտը» նեղված էր, մարդիկ մտահոգ էին, որ ճանապարհը պետք է էլի նորոգել, աղջիկը զարմացած էր, որ իր ոտքերի տակից քիչ-քիչ հեռացող սերն այդպիսի ուժ կարող էր ունենալ... Եվ միայն տղան էր, որ կարծում էր՝ աղջիկը խռովված է բոլոր աղջիկների նման, ուստի ավելի հեռացավ, որ կյանքի իր բաժին անմահության ծաղիկը որոնի...

Քամի էր, քշում էր մեկին, ու նա քամու քաշվածն էր: Ուզում էր դուրս թռչել պատուհանից, բայց հետմահու չլսել՝ «ափսոս էր կյանքը, ափսոս էր ցածրությունը, ափսոս էր մարդը» բացականչությունները, որովհետև նա այդ պահին միայն սերն էր ափսոսում և ուզում էր թռչել իմանալու, թե է՞՞ ինչ չկա, երբ չկա սերը...



«ԶՐՈՒՅՑ»-Ի ԶՐՈՒՑՈՂՆԵՐԸ

Երկու գյումրեցի արվեստագետ, որոնք երկար տարիներ աշխատել են նույն արվեստանոցում: Երկու տարբեր անհատներ, որոնք լուռ զրուցում են արվեստի միջոցով: «Զրույց» ցուցահանդեսը ոչ միայն հոր և որդու զրույց էր, այլև միանշանակ տարբեր արվեստագետների երկխոսություն: **Համբարձում Ղուկասյան**՝ դասական և արդի արվեստի հետևորդ: **Վահագն Ղուկասյան**՝ ժամանակակից արվեստի միջոցներով աշխատող արվեստագետ:

ցի հիմնական թեման կանայք են: Նրա կանայք լուսեղեն են ու ոգեղեն, կոկետ ու սեփեթոր: Գործերը հիմնականում գեղծ են ավելորդություններով: Գրեթե միշտ մուգ հետնաֆոնը նետրալ պահելով՝ կանացի կերպարները գույնի միջոցով լուսավորվում են ինքնակա լույսով: Ֆիգուրները և՛ իրապաշտական են, մյուսապես, տաք ու ջերմ, և՛ միաժամանակ երևակայական ու անեական: Դրանք կամ մերթնեմները տարրալուծվում են ֆոնի հետ, կամ դուրս են գալիս ֆոնից և առկայծում են ցածր լուսավորությամբ: Ղուկասյանի վրձնահարվածները սահուն են ու հարթ: Գույները ճիշտ է վառ, ճշան կամ բազմերանգ չեն, այնուամենայնիվ մուգ ֆոնի հետ ակտիվ են, գունեղ: Նկարներում զգացվում է դուրսնապական կոլորիտը, տարբերվում են գեղանկարչական դասական մտածելակերպն ու ձեռագիրը:

Ծառերը, ճյուղերը, փշերն ու ստվերները...

Վահագնը, լինելով երիտասարդ սերնդի արվեստագետ, ունենալով ակադեմիական կրթություն, սիրում է փորձարարությունը, փոփոխությունները, բազմամիջոց արվեստը: Վահագնի արվեստում արդեն տևական ժամանակ է, ինչ նկատվում է հետաքրքրություն ստվերների հանդեպ: Սակայն նրա գործերում ստվերը ոչ թե գեղարվեստական միջոց է, հնարք արտահայտչականության կամ պատրանքի հասնելու համար, այլ աշխատանք է ինքնին ստվերի հետ: Չենք ստվերն է նրա գործերի թեման, մոտիվն ու սյուժեն, «գլխավոր հերոսը»: Ստվերը ևս լույսի արգասիք է: Եթե չկա լույս, չկա նաև ստվեր: Վահագնին բնորոշ գույներն ավելի հանգիստ են, պաստելային:

Հայր ու որդի, լինելով բնավորությամբ շատ նման, իրենց թե՛ արվեստային մտածողությամբ, թե՛ ոճային ուղղվածությամբ միանգամայն տարբեր են: Անգամ մի փոքր դժվար էր նրանց համատեղ ցուցահանդեսը պատկերացնելը: Բայց արի ու տես, կողք կողքի ստեղծագործելն արեց իրենը: Գիտակցական տարիքից հետևելով հոր արվեստին ու նրա փորձառությանը, տեսնելով նրա գույները, մտածումները՝ անհնար էր, որ նկարիչ Վահագնը անմասն մնար հոր արվեստից: Չէ՞ որ նրա աչքերի առաջ են ստեղծվել այդ բոլոր գործերը: Որքան էլ որ Վահագնի ստեղծագործություններում գերակայում է ժամանակակից արվեստի մտածելակերպը,

այնուամենայնիվ «Զրույց»-ը ոչ թե սերունդների բախում էր, հակասություն, այլ կարծես Վահագնի երախտագիտության տուրքն է իր հորը՝ իր առաջին ուսուցչին ու արվեստի վարպետին: Ոգեշնչվելով Համբարձում Ղուկասյանի «Սոնետ» շարքից՝ Վահագն Ղուկասյանն արդեն սեփական մտածեցումը ու ձեռագրով ստեղծել է չորացած ծառերի ու դրանց ստվերների, արտացոլանքների իր աշխատանքները: «Զրույց»-ում ներկայացված ծառերի չորացած ճյուղերն ու դրանց ստվերներն արդեն ունեն այլ մոտեցում: Նա փորձել է խաղալ հոր գործերի գունային հնչյունագների հետ, դուրս բերել դրանք, շեշտել, ավելացնել կամ բյուրեղացնել: Սա լուռ երկխոսություն է, փոխլրացում, սերտաճեցում: Գործեր, որոնք դուրս են գալիս մեկը մյուսից: Սակայն, դրանով հանդերձ, գործերից յուրաքանչյուրը դիտվում է առանձին: Հոր գործերի հիմնական կոլորիտն է, որ որդու համար նոր ստվեր ու դրապատճառ է հանդիսացել՝ նոր շարք ստեղծելու համար:

Երկու արվեստագետների հավասարությունը զգացվում էր անգամ էքսպոզիցիոն դասավորության մեջ: Համբարձումի փոքրաչափ գործերի կողքին Վահագնի ավելի մեծ ծառերն են, ու հակառակը՝ Համբարձումի փոքր-ինչ մեծածավալ կանանց կողքին՝ Վահագնի փոքրաչափ ստվերները: Նրանց երկուսի մոտ մեկ ընդհանուր հայտարարն է՝ բնութային: Բնությունը՝ կնոջ, ծառերի, չորացած փշերի կամ ստվերների տեսքով: Հայրն ու որդին լուռ ստեղծագործել են: Արդ-

յունքը եղավ «Զրույց»-ը, որտեղ միանգամայն տարբեր, բայց նույն արյունատարով սնված պատկերները շշմջում էին ու զրուցում միմյանց հետ:

Արվեստագետ Գայանե ՊԱՊԻԿՅԱՆ





ԵՂՈՒՐՈՂ ԵՂԻԳԱՐՅԱՆ (1943-2019)

Եղուարդ Եղիգարյանը պատկանում է Լենինականի 1970-ականների նկարչների սերնդին: Նա ինքնատիպ ու բազմաշերտ արվեստագետ է, որի կտավները առաջին հայացքից թվում են հակասական ու բարդ...



Եր հաղորդում նրա գործերին: Նկարչը մեծ ուշադրություն է դարձնում գծային կուլտուրային: Դարչնագույն գորշ երանգներով արված, ասես խունացած «Դարպասներ», «Գյուլնրի» կտավները հաստատում են հողի, մշակույթի, պատմության կապը: Այս ու էլի մի շարք գործեր ցուցադրվեցին 1974թ. Լենինականի նկարչական դպրոցի սրահներում կազմակերպված ցուցահանդեսում, որի նախաձեռնողներից էր Եղուարդ Եղիգարյանը: Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջացրեց երիտասարդ նկարիչների մեջ:

Եղիգարյանի արվեստում առանձնահատուկ տեղ են գրավում թատերական ձևավորումները: 1970-1988 թվականներին, լինելով Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր նկարիչը, ձևավորել է Ռ. Շեքսպիրի, Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի և այլ հեղինակների շուրջ 40 ներկայացումներ

րիչ՝ ստեղծագործական ծրագրերով ու մեծ հեռանկարներով: Սակայն 1988 թվականի աղետը բեկումնային եղավ նկարչի համար. նա, ինչպես Լենինականի շատ արվեստագետներ, միաժամանակ դադարում է ստեղծագործելուց՝ կորցնելով կապը հայրենի հողի հետ: Ու թեև 1990թ. արժանանում է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչման, մշտապես գնահատվում հայրենիքում, նրան ասես ձգում էին այլ եզրեր:

1991թ. Չեխիա տեղափոխվելու հեռանկարը Եղիգարյանի համար դարձավ փրկության օղակ. այստեղ նա վերսկսեց ստեղծագործելը՝ շարունակելով հյուսել իր կյանքի հեքիաթը: 2003 թվականին Պրահայում նա հիմնում է արվեստանոց: Տաղանդավոր նկարիչն ընդունվում է և շուտով ճանաչում է գտնում հայրենիքից հեռու: Ինչպես նրա մասին գրել է հայտնի արվեստաբան Ռոսաննա Ռիչին. «Ինչ վերաբերում է արժեքին, ապա նրա աշխատանքները շատ հարուստ են թե՛ գծան-

կարի, թե՛ գունանկարի տեսանկյունից: Եղիգարյանի նկարները հիմնականում պատկերում են նստած կամ պառկած կանանց կերպարներ, որոնց սիմվոլիկ նշանակությունը ձեռք է բերում որոշակի արևելյան շեշտադրում ունի և ուլտրամարինի համադրությամբ: Գոյություն ունի խիստ անհատական գեղարվեստական լեզու, որտեղ փոխաբերական տարրը (կին, երաժիշտ, գործիք, բնապատկեր, կատուն, տարբեր առարկաներ) միտումնավոր համադրվում է խորհրդանշին. դրանցից մի քանիսը շեշտված կրկնօրինակում են մարդկային կերպարների ուրվագիծը»: Եղիգարյանը ցուցադրվում է Եվրոպական տասնյակ ցուցասրահներում, նրա մասին խոսում են, հետաքրքրվում նրա արվեստով, նա դառնում է Չեխիայի արվեստի միության պատվավոր անդամ:

Չեխիայում նա նկարում է ոճավորված, գունեղ, լուսակիր կտավներ: Այստեղ Եղիգարյանը կրում է միջնադարյան կոստյումների ավանդական վիտրաժային նկարչության ազդեցությունը, ու թեև նկարները դառնում են ավելի մակերեսային, թափանցիկ, միևնույն ժամանակ՝ լուսավոր ու կենսահաստատ: Ի՞նչ էր սա. փորձ՝ մոռանալու հայաստանյան ավերակների մեջ հայտնված եզրերը, թե՛ մեկ այլ իրականության որոնում, որտեղ տիրում են ներդաշնակությունն ու գեղեցկությունը, ուրախությունն ու երջանկությունը, իսկ բիբլիական պատումները ստանում են նոր խորհուրդներ ու իմաստավորումներ... Վիտրաժային ներկերը օգնեցին Եղիգարյանին գտնելու այն թափանցիկությունն ու փայլը, որոնց նա միշտ ձգտում էր իր արվեստում: Միաժամանակ նրա անդրադարձը հոգևոր թեմաներին, այն թեմաներին, որոնց չէր կարող դիմել խորհրդային երկրում՝ «Տիրամայրը մանկան հետ», «Խաչելություն», «Պիետա», ցույց տվեցին, որ նկարչի հոգևոր որոնումները բնականոն փուլ էին իր զարգացման ճանապարհին: Եղիգարյանի նկարչական լեզուն դառնում է համաձայնակալի, հասկանալի ու պարզ բոլորի ու յուրաքանչյուրի համար: Այդ թվացյալ պարզությունը, անկասկած, մեծ վարպետության արդյունք էր:

Եղիգարյանը անհատական ցուցահանդեսներով ներկայացել է արտասահմանյան մի շարք երկրներում՝ Գերմանիա (1994, 1995, 1998, 2002, 2012), Նիդերլանդներ (1996-2011), Նորվեգիա (1999-2001), Իտալիա (1998), Բելգիա (2002), Քաթար (2009):


2019թ. Եղիգարյանը մահացավ Պրահայում: Ո՞րն էր նկարչի պատգամը. միգրացիային, որ իր արտիստիկ էությունը դուրս բերելով պատեհապաշտությունից, սահմանափակումներից, պայմանականություններից՝ նա ստեղծեց իր հեքիաթը, այն պարուրեց լույսով, մաքրությամբ ու սիրով: Ու թեև այդ աշխարհը հայրենիքից շատ հեռու էր, բայց իր ներքին էներգիայով ու մշտամնա կենսասիրությամբ նա պատգամեց իր հեքիաթը՝ սիրելի հայրենիքը մտովի շեմացնելով:

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ Արվեստագիտության թեկնածու, դոցենտ



յամբ՝ արվեստանոցը կոչվեց «խուփիզ», իսկ նրա անդամները՝ «խուփիստներ»: Դա քաղաքի սերուցքն էր՝ Ռաֆիկ Ասատրյան, Հակոբ Ջիվանյան, Սասուն Գրիգորյան, Աշոտ Ավդալյան, Խաչատուր Վարդապարտյան, Աշոտ Հովհաննիսյան, Ջավեն Կոչոտյան, Եղուարդ Եղիգարյան, Սուսաննա Մկրտչյան: Նրանց բնորոշ էին վերափոխումների ճանապարհի որոնումը, ինքնարտահայտումը, ձևն ու բովանդակությունը համադրելու ձգտումը: Երիտասարդ ստեղծագործողների երեկոյան հավաքույթների ժամանակ հնչող արվեստի, փիլիսոփայության մասին գրույցները, բանավեճերն ու որոնումները նրանց հանգեցրին կոմպոզիցիաների նոր գունային լուծումների հաստատման: Շատ բան կար անելու. ի տարբերություն մեր օրերի՝ ասելիքը շատ էր, միջոցները՝ սուղ: Արարման մեծ քաղց կար, տենդ...

«Կարմիր կարկուտ», «Մակբեթ», «Մեծ աղմուկ ոչնչից», «Տիտոս Անդրանիկոս», «Ռոմեո և Ջուլիետ»: Հատկանշական է, որ «ժլատ ասպետը», «Սոցարտ և Սոլիերի» ներկայացումները կատարված են միմիմալիստական և կոնստրուկտիվիստական լուծումներով, ինչը վկայում է նկարչի ստեղծագործական ինքնատիպ մտածողության մասին: Նա մշտապես որոնող, պրպտող ստեղծագործող էր, մեկն այն մարդկանցից, որ դիտարկում են կյանքն իբրև թատրոն՝ պատմելով «մարդկային կատակերգության» մեծ ու փոքր դեգերումների մասին: Թատերական ձևավորումների լեզուն խորհրդանշական է, գույնը՝ ժուժկալ՝ սև, սպիտակ, գորշ նրբերանգներով հագեցած, որևէ ակտիվ գույնի /կապույտ, դեղին կամ կարմիր/ շեշտադրմամբ:



Եղիգարյանի վաղ շրջանի գործերը գրաֆիկական են: Հիմնականում նա աշխատում էր մուգ մատիտով՝ խորություն ու պլաստիկա հաղորդելով ստեղծագործություններին: Որպես կանոն՝ շատ գործեր թողնում էր անավարտ. այս առումով Եղիգարյանն այն նկարիչներից է, որ գիտակցաբար կիրառեց ստեղծագործության անավարտության (non finito) սկզբունքը, ինչը շարժում, յուրօրինակ թրթռ ու կյանք

ըն չի սահմանափակվել սրանով: Այսօր գրեթե մոռացված են Եղիգարյանի մոնումենտալ ձևավորումները: 1983թ. Լենինականի երկաթուղային կայարանի սպասարանի պատին, Գուլպա-Մասկեդեի գործարանի սրահներից մեկին և այլուր կարելի է տեսնել Եղիգարյանի ինքնատիպ որմնանկարները: 1974 թվականից նա ԽՍՀՄ նկարիչների միության անդամ էր, ճանաչված ու գնահատված նկա-





Տարեգրքում հայրենիքի, հարազատ եզերքի հանդեպ ունեցած սերն ու կարոտն են՝ գեղարվեստորեն ամփոփված Արցախի գրողների արձակ և չափածո ստեղծագործություններում: Հեղինակներից շատերը ոչ միայն գրչով, այլ նաև զենքով են մարտնչում թշնամու դեմ, պայքարում վտանգված ինքնության, հոգևոր, պատմամշակութային արժեքների փրկության և պահպանման համար: Ժողովածուի մեջ տեղ են գտել երեք պատերազմների միջով անցած անդամուլի կորստի ցավն ու զրկանքներն ապրած, սակայն վերջնական հաղթանակի նկատմամբ հավատը չկորցրած ավագ, միջին և երիտասարդ սերնդի ներկայացուցիչների գրական գործերը, որոնք ընթերցողներին հնարավորություն կտան վերծանելու կողմնորոշված տողը, խոսքը, բառը...

«Ձայն արցախական»-ը որպես արձագանգ Արցախի մարտնչող ժողովուրդի արդարագոյն ձգտումներուն: Խորագոյն շնորհակալութիւն Արցախի գրողների Միութեան իրենց ընդառաջելուն համար, հատորի հմբագրական Խորհուրդին իր բժախնդիր եւ տքնաջան աշխատանքին համար: Աւելի աւին կը մաղթենք Արցախի գրողներուն իրենց աննկուն ստեղծագործական ոգիին համար: Շնորհակալութիւն Հայաստանի եւ Արցախի Համագայի ինի գրասենեակներուն իրենց անվերապահ աջակցութեան համար:

Մեր նպատակն է յաջորդաբար լոյս ընծայել մատենաշարի շարքը՝ շաղկապելով Մայրենին Հայրենիին՝ ի պանծացումն եւ գոյատեւումն Հայ Գրականութեան:

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»  
ՀԱՅ ԿՐԹԱՎԱՆ ԵՒ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԱՍՆԱԾԻՂ



«Ձայն հյուսիսային»-ը մատենաշարի Բ հատորն է, որը ներառում է վիրահայ, ռուսահայ, աբխազահայ և ընդհանրապես Հայաստանից հյուսիս գտնվող երկրներում ապրող հայ ստեղծագործողների երկերը: Այսպիսով, գրքում տեղ են գտել Կրասնանից 3, Ռուսաստանից 11, Աբխազիայից 19, ինչպեսև Բելոռուսիայից, Էստոնիայից և Լիտվայից 1-ական ստեղծագործողների երկեր:

**ՀՅՈՒՄԻՍԱՅԱՅ  
ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ  
ԴԻՍԱԳԻԾԸ**

«Ձայն հյուսիսային»-ը XXI դարու Հայ Գրականութիւն մատենաշարի երկրորդ գիրքն է, որը Համագային Հայ Կրթական Մշակութային Միության Նյու Յորքի մասնաճյուղի նախաձեռնությամբ է, իսկ ծրագրի մտահղացումը Հրանդ Մարգարեանին է, որը հայապահպանությանն է միտված նախառնաջ:

Գիրքը արձակի, պոեզիայի առանձին բաժինների չի բաժանվել, այլև կառուցվել է ներքին դրամատուրգիական զարգացման տրամաբանությամբ: Ստեղծագործողների հերթականությունը բխել է հենց ներքին տրամաբանությունից և բացառապես կազմողի, այսինքն՝ իմ ջանքով է պայմանավորված:

Ընդհանուր առմամբ գրքի արձակը մի քանի հիմնական ուղղությունների է հետևում:

Ընդհանուր առմամբ «Ձայն հյուսիսային» հատորը կարևոր գործառույթ ունի նախառնաջ հայ գրականության ամբողջացման համապատկերում, քանի որ Հայրենիք-Սփյուռք կամուրջն ավելի նպաստավոր, կառուցողական և կայուն կլինի, երբ ի սկզբանե գրական մշակութային երկխոսությունը կայանա:

Արմեն  
ԱՎԱՆԵՍՅԱՆ

Օրերս «Մանկապատանեկան գրքի շաբաթ»-ի շրջանակներում «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի արվեստի խմբակի սաներն այցելեցին Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունք: Տեղի ունեցավ ուշագրավ հանդիպում-գրույց մանկագիրների և երեխաների միջև:

ՉԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ Անդրանիկ Կարապետյանը երեխաներին ներկայացրեց մանկագիր, արձակագիր Շնորհիկ Շահինյանին և արցախցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանին: Կենտրոնի սաներն ընթերցեցին արձակագիր Շ. Շահինյանի «Անին ու քամին» մանկական գրքից տարբեր ստեղծագործություններ, ասմունքեցին Ա. Կարապետյանի, Ստ. Միքայելյանի և Ս. Աղալարյանի՝ մանկաց հասցեագրված բանաստեղծություններից: Այնուհետ երեխաներն իրենց հուզող հարցերն ուղղեցին գրողներին:

Գեղարվեստական խոսքի առանձնահատկությունների ու պատկերավորման, արտահայտչական համակարգի մասին հետաքրքիր գրույց-երկխոսությունն անցավ տպավորեց երեխաներին: Հանդիպման ավարտին նրանք նվեր ստացան Ա. Կարապետյանի հեղինակած և օրերս լույս տեսած «Խաղաղության գույնը» մանկական բանաստեղծությունների ժողովածուն:



Վարդուհի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՆԱԶ-ԿԱՐՄԻՐ  
ԿԻՐԱԿԻ**

Հայ եկեղեցին Ջատկին հաջորդող կիրակին անվանում է Կրկնազատիկ, սա նշանակում է, որ կրկնվում են զատակական ուրախությունները և տիրող հոգևոր մթնոլորտը: Այսօրինակ մթնոլորտ էր ապրիլի 15-ին Գյումրու Վարպետացի փողոցում Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանի բակում:

տական հետազոտությունների կենտրոնը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղը, Գեղագիտության ազգային կենտրոնի Գյումրու բաժանմունքը, Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանը, Գյումրու Մտորումների թատրոնը և «Ձայն» մշակութային կենտրոնը մեծ գրողի թանգարանի բակում անցկացրին «Ջատկական տոնի» Կանաչ-կարմիր կիրակի» խորագրով հանդիսությունը, որին մասնակցում էին ոչ միայն

նշված կազմակերպությունների սաներն ու ուսանողները, այլև Գյումրու թիվ 25 հիմնական դպրոցի /տնօրեն Իրինա Բաղդասարյան/ աշակերտները զատակական մշակույթով, երգով, պարով ու ասմունքով: Ջատկական ավանդական տոնին իրենց մասնակցությունն էին բերել նաև հայ ավանդական «Հրայրք» պարի խումբը, Գյումրու գեղագիտական ազգային կենտրոնի երգի և պարի խմբերը, Միայնակ ծերերի երգչախումբը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի երգչախումբը: Երևանի կինոյի և թատրոնի ուսանողները ներկայացրին Ջատկական տոնների ժողովրդի, հատկապես նոր սերնդի տոնածիսական ակտիվ վարքագծի և ավանդական բնութագրի ապահովումը»,- նշեց էթնոհոգեբան Կարինե Սահակյանը:

«Հանդիսության նպատակը տոների խորհուրդը իրագրելն ու հանրայնացնելն է, ինչպես նաև մեր ժողովրդի, հատկապես նոր սերնդի տոնածիսական ակտիվ վարքագծի և ավանդական բնութագրի ապահովումը»,- նշեց էթնոհոգեբան Կարինե Սահակյանը:

Հանդիսությունը անցկացվեց ՀՀ ԳԱԱ 80-ամյա հոբելյանի շրջանակներում:

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՍ  
ԳՅՈՒՄՐԻՈՒՄ**

Ապրիլի 11-ին Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնում բացվեց գեղանկարիչ Գյուլնարա Սարիբեկյանի անհատական ցուցահանդեսը:

«Այս սրահը այսօր ողողված է Գյուլնարա Սարիբեկյանի նկարների ու վրձնած ծաղիկների գույներով ու պայծառ տրամադրությամբ. վայելեք նրա արվեստի ծիծղուն գույները՝ մարդ-բնություն կապի լավագույն արտահայտություն»,- բացման խոսքում նշեց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, նկարչուհի Սուսաննա Մկրտչյանը:

«Գեներտիկ կանխորոշմամբ եկա նկարչական աշխարհ. մայրս ասեղնագործուն էր: Ի վերուստ նախասահմանված էր՝ ընտրել արվեստի աշխարհը: Երկրաշարժից հետո հիշեցի, որ վրձիններս չոր են, և ներկերս էլ՝ շատ հին, բայց նոր էր ստեղծագործելու ներքին մղումս: Աղետից հետո Արթիկից երեք դպրոց, նաև մեր դպրոցը, որտեղ դասավանդում էի, տեղափոխվեցին Լատվիայի Ցեսիս քաղաք: Մի անգամ Ռիգայում եղանք ջրաներկ աշխատանքների ցուցահանդեսի: Երեխաները գնացին դաիլիճ՝ երգեհոն լսելու, իսկ ես տարերքի մեջ էի... Հենց այդ սեյակում սկսեցի նկարել: Սկսվեց նոր փուլ իմ կյանքում»,- խոստովանում է գեղանկարչուհին:

Գյուլնարա Սարիբեկյանի առաջին անհատական ցուցահանդեսը բացվել է Լատվիայում /Ցեսիս, 1989/, ապա Երևանում /ԱՕՔՄ-ի շենքում/, 1992/, Արթիկում /1993/, Գերմանիայում /Համել, 1994/, Գյումրիում /1996/, Ուկրաինայում /Օդեսա, 1997/, ԱՄՆ-ում /Ֆիլադելֆիա, 1998/, Ֆրանսիայում /Մարսել, 2001/ Սիրիայում /Հալեպ, 2009/, ՌԴ-ում /Նիժնի Նովոգորոդ, 2015/, Սանկտ Պետերբուրգ, 2016, 2019/ և այլն:

«Երեսուն տարի առաջ անհատական ցուցահանդեսով ներկայացել եմ նաև Գյումրու գեղագիտությունը ազգային կենտրոնում, - հուզմունքով հիշում է նկարչուհին,- այսօր ես վերապրում եմ այն նախնական հույզերն ու տպավորությունները, որ ունեցել եմ տարիներ առաջ»: Գույնի, նրբերանգի, բնության ու հողի անմիջական կապն ու հարազատությունը նրա արվեստում վերածվում են տոնի ու լուսավոր աշխարհընկալման: Գյուլնարան առանձնահատուկ վրձնել է Ամբերդի ծաղիկները:

«Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում «Տիգրան Մեծ» եմ նկարել. ինձ ոգևորում են պատմական թեմաները: Եղել եմ Հայաստանի և արտերկրի շատ եկեղեցիներում և նվիրել եմ Հիսուսի ու Տիրամոր իմ վրձնած նկարները: Կուզեմամ, որ նկարներս դիտողը հաճույք ստանա, հոգևոր բավակապությունը»:

Նուրնե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ



Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ:  
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62  
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64  
Խմբագրական խորհուրդ  
Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլտորադո Պրինտ» ՍՊԸ  
Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 1 տպագրական մանուկ